



ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 4 «23» 12 2015 թ.

Համալսարանի գիտական խորհուրդը, լսելով և քննարկելով հետբուհական և շարունակական կրթության աշխատանքների գծով պրոռեկտոր Ա. Չ. Համբարձումյանի «Հետբուհական եվ շարունակական կրթության ֆակուլտետի 2015 թվականի աշխատանքների վերլուծություն» թեմայով զեկուցումը,

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համալսարանի հետբուհական և շարունակական կրթության ֆակուլտետի աշխատանքային գործունեությունը գնահատել բավարար:
2. Հետբուհական և շարունակական կրթության ֆակուլտետը վերանվանել մասնագիտացման և շարունակական կրթության ֆակուլտետ:
3. Հանձնարարել հետբուհական և շարունակական կրթության գծով պրոռեկտոր Ա.Չ.Համբարձումյանին՝
 - 3.1 վերանայել և հաստատել մասնագիտական (կլինիկական օրդինատորայի) ուսումնական նոր ծրագրեր՝ ՀՀ առողջապահության բնագավառի մասնագիտությունների և նեղ մասնագիտությունների որակավորման բնութագրերի համաձայն,
 - 3.2 ընդլայնել մասնագիտական կատարելագործման դասընթացների ցանկը՝ առողջապահության ժամանակակից պահանջներին համաձայն:
4. Մշակել և ներդնել նոր ծրագրեր՝ ընդլայնելով բժիշկների և միջին բուժանձնակազմի լրացուցիչ մասնագիտացումների ցանկը:
5. Մասնագիտական կողմնորոշման նպատակով ընդհանուր բժշկության, ստոմատոլոգիական, դեղագիտական և օտարերկրացիների ուսուցման ֆակուլտետների ավարտական կուրսի ուսանողների համար կազմակերպել հանդիպումներ հետբուհական ամբիոնների հետ:
6. Սույն որոշման կատարման հսկողությունը հանձնարարել ռեկտոր Մ.Չ.Նարինյանին և արդյունքներին անդրադառնալ 2016թ. դեկտեմբերին:



բ.գ.դ.,պրոֆ. Մ. Չ. Նարինյան

բ.գ.դ.,պրոֆ. Տ. Գ. Ավագյան